

**Կ Ա Ր Գ**

**Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի  
“Բանբեր” պարբերական հանդեսում գիտական աշխատանքների (հոդված, հաղորդում,  
հրապարակում, գիտական տեղեկատվություն) տպագրման**

“Բանբեր” հանդեսի խմբագրական խորհուրդը գիտական աշխատանքներն ընդունում է, եթե՝

ա) կից ունեն տվյալ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված, համապատասխանաբար, ամբիոնի վարիչի կողմից.

բ) ունեն մասնագիտական գրախոսական՝ գրված գիտությունների դոկտորի կամ թեկնածուի կողմից (բացառություն կարող են կազմել օտար լեզվի, ֆիզիկական կուլտուրայի, արվեստի ամբիոններից ստացված աշխատանքները)..

գ) ունեն հղում-ծանոթագրություններ և (կամ) օգտագործված գրականության ցանկ.

դ) ունեն երկու այլ լեզուներով ամփոփումներ.

ե) ծավալը 5-10 համակարգչային էջ է՝ ստորև տրվող չափանիշներով.

զ) պարունակում են անհրաժեշտ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին:

Գիտական աշխատանքը հանդեսի խմբագրական խորհրդի կողմից կարող է ուղարկվել արտաքին գրախոսման:

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով (կրիչով). տառատեսակը՝ Arial Armenian (հայերեն), Arial Latrus (ռուսերեն), Times new Roman (այլ օտար լեզվով), տառաչափը՝ 12, տողահեռավորությունը՝ 1.5:

Ծանոթություն 1: Գիտական աշխատանքները տպագրության ընդունվելուց հետո ինստիտուտի աշխատակից-հեղինակները մինչև հանդեսի հերթական համարի լույսընծայումը մուծում են գումար՝ հանդեսի տվյալ համարի ինքնարժեքի չափով: Այլ հեղինակները մինչև հանդեսի տվյալ համարի տպագրությունը մուծում են 2000 դրամ գումար՝ յուրաքանչյուր էջի համար:

Ծանոթություն 2: Գիտությունների դոկտորների աշխատանքները չեն գրախոսվում և խմբագրության կողմից ընդունվում են առանց ամբիոնի և երաշխավորության:

Ծանոթություն 3: Ե) կետում նշված ծավալային սահմանափակումը վերաբերում է հասարակական գիտությունների ոլորտի գիտական աշխատանքներին: 5 էջից պակաս լինելու դեպքում վերջիններս չեն ընդունվում, իսկ 10 էջը գերազանցելու պարագայում յուրաքանչյուր էջի համար գանձվում է 2000 դրամ գումար:

Ծանոթություն 4: Դրսեկ հեղինակների գիտական աշխատանքների համար երաշխավորությունը անհրաժեշտ չէ: